

կեղեցիների երգեցմունքը տաճկահայերից, նոյն իսկ տարբեր են երգում ոռւսահայերի պյլ և պյլ եկեղեցիներում Տփխիսինը պյլ է, Բագուինը պյլ, Անալիսայինը պյլ և Ոռւսաստանի կողմերինն պյլ:

Այս ամենի մէջ միակերպութիւն մտցնելու համար՝ պէտք է բոլոր կողմերի երգեցմունքներից ընտրել ամենալաւ, ներդաշնակ հնչող կտորները, պէտք է ընտրել, սյսպէս ասծ, միջին երգեցողութիւնը և պյսպէս ընդհանրացնել, որ Խորթ չհամարուի ոչ մէկ կողմին:

Այս նպատակի համար անհրաժեշտ կլինէր նախապէս մի մասնաժողով կարգել գլխաւոր տեղերի հմուտ երգեցողներից և երաժիշտներից, զաել մաքուր, հին եղանակները և վերջնականապէս որոշելով ընդունելին՝ այն եղանակները ձայնագրելով տպագրութեան յանձնել և ընդհանրացնել:

Եկեղեցական երգեցմունքը գիրք չէ, որ մաշուի փոխեն. Հազարաւոր անձինք գիտեն եկեղեցական երգեցողութիւնը և միանդամ նոցա իրենց գիտեցածը մոռացնելու և նորը ուսուցանելու համար՝ անհրաժեշտ կլինէր, որ սյդ նորը իրօք մի հիմնաւոր փոփոխութիւն լինէր:

ՊԱՑՄՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՅ ԱՂՋԱՑԱ-  
ԽՆՎԱՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ (1872  
ապր. 1—1893 ապր. 1)—կազմեց Ա. Գալստեանց:  
Բագու. 1895.

Բագուի հայ հասարակութեան պատիւ բերող հաստատութիւնների մէջ վերջին տարիներու ամենից շատ խօսակցութեան առարկայ էր դառնել Աղքատախնամ Հոգաբարձութեան հաշիմները, որոնց մասին աւելի շատ գրուեց լրագիրներում, քան թէ իսկապէս պէտք էր: Հոգաբարձութեան հաշուատես անդամներից մէկի կողմից մանաւանդ բաւական խիստ ակնարկութիւններ կային այդ-

հաստատութեան գլխաւոր հիմնադիրներից մէկի և նորա հոգին կազմող անդամի պ. Գրիգոր Դիլդարեանցի մասին: Բագուկի հասարակութիւնը չէր մասնակցում այդ մեղադրանքներին և ինքը պ. Դիլդարեանն էլ կարծէք թէ չէր հոգում իրան արդարացնելու այդօրինակ ծանր մեղադրանքների դէմ և այդպիսով մի տեսակ նմանում էր մեր հասարակական հիմնարկութեանց այն ներկայացուցիչներին, որոնք տասնեակ տարիներ մի կերպ վարելով իրանց պաշտօնը չեն էլ մտածում հասարակութեան հաշիւ տալու վերայ:

Այս պատճառով շատ մսիթարական էր ամեն բարեմիտ հայի համար վերոյիշեալ պատմութեան հրատարակութիւնը, որ իսկապէս նոյն հոգաբարձութեան տասնամեայ հաշիւն է կազմում, քանի որ նեղ անձնական հաշիւների պատճառով վատահամբաւուած էր մի անձնաւորութիւն, որ բաւական յարգուած է Բագուկի հասարակութեան կողմէց:

Մենք չենք մտնում այդ պատճութեան և հաշիւների ըննութեան մէջ, մեզ համար ուրախալի է այն երեղիթը, որ հասարակական հաշուէտուսւթիւնը սկսել է սովորական դառնալ մեր մէջ և դորանով կփրկուին այն կոպէկները, որոնցից կախումն ունի մեր նոր սերնդի գաստիարակութեան և ժողովրդի բարեկեցութեան դործը:

Այսուեղ առաջ ենք բերում միայն այդ գրբուկից մի բանի ընդհանուր թուեր.—

1872 թուից մինչև 1892 թիւը, այնէ 21 տարուայ ընթացքում հոգաբարձութիւնն ունեցել է արգիւնք 31,381 և. 91 կ. որոնց մեծագոյն մասը գոյացել է տոկոսներից, Երնդեան և Զատկի տօներին արած նուէրներից, կտակներից, հոգեբաժնից, հացկերոյթի փոխարէն և այլ առթիւ տուած նուէրներից:

Խոկ ծախք այդքան ժամանակում եղել է 31,705 և. 8 կ. որոնց մեծ մասը գնացել է աղքատների ոժանդակութեան և աղքատանոցի շինութեան վերայ:

